ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան, Տերյան փող., 44, հեռ.՝ (+374 11) 518 401, էլ. փոստ՝ kentron@yerevan.am

N 23/04-124239

«17» 12 19 20__թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի դեկտեմբերի 11-ի հ.343-88 հարցման՝ հայտնում եմ, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 101-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական շրջանի նոր ղեկավարի նշանակվելուց հետո իր լիազորությունները վայր է (են) դնում վարչական շրջանի ղեկավարի տեղակալը (տեղակալները):

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 101-րդ հոդվածի 3-րդ մասն ու նույն օրենքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 2019 թվականի դեկտեմբերի 2-ի հ.80-Ա և հ.81-Ա կարգադրություններով 2019 թվականի դեկտեմբերի 2-ից դադարեցվել է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալներ Զոնիկ Մարգարյանի և Արման Հարությունյանի՝ որպես Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալների լիազորությունները, իսկ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի լիազորությունները չեն դադարեցվել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալներ Արմեն Ազիզյանի և Նիկոլայ Սարիբեկյանի կենսագրական տվյալներն առկա են www.yerevan.am կայքում:

ԱՎԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ

Իրավաբանական բաժին.
Կատարող՝ Ա. Մարտիրոսյան
☎ 011-518-419 E-Mail: kentronirav@mail.ru